№ 221 Նոյեմբերի 26 (Դեկտեմբերի 8) 1881 Նոյեմբերի 26 (Դեկտեմբերի 8) № 221

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
„ՄՇԱԿ“
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ
ԵԿՈՂ 1882 ԹՒԻՆ

(ՏԱՍՆ ԵՒ ՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրօգրամմայով:

ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետօն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, 10 րուբլ է, կէս տարվան 6 ր., իւրաքանչիւր ամսին 1 րուբլ: Հատով համարները 5 կոպէկ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց օրգանները Եւրոպայում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մոսկվայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքիայի ժամանակակից դրութիւնը.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Ս. Պետերբուրգից.

ՀԱՅՈՑ ՕՐԳԱՆՆԵՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Շատերը եւրոպացիներից պարապել են հայոց լեզուով, հայոց գրականութեամբ, մեր լեզուի քերականութեամբ, նրա լեզուագիտական ձեւերով, բաղդատել են հայոց հին լեզուն եւրոպական ճիւղերին պատկանող միւս լեզուների հետ, վերջապէս շատերը եւրոպացի գիտնականներից պարապել են հայոց պատմութեամբ, հայ ազգի անցեալով: Պատահել է նոյնպէս որ եւրոպացի ճանապարհորդները նկարագրել են իրանց գրուածներում հայի ներկայ դրութիւնը, գովել են հայի ցեղական յատկութիւնները:

Բայց առաջին անգամն է պատահում որ եւրոպական մի երկրում, այն էլ մեծ պետութիւններից մինի մայրաքաղաքում, հիմնվէր մի օրգան եւրոպական լեզուով, որ յանձն առնէր պաշտպան հանդիսանալ հայ ազգի ինտերեսների:

Այդ նոր և մեզ համար անսովոր քայլը, առաջին անգամ արել է „Journal d'Orient“ լրագրի խմբագիրը: Շահ ունի, թէ չահ չունի պ. Սալլ, որ առաջին անգամ արել է այդ քայլը և աջողութեամբ առաջ է տանում իր ձեռնարկած գործը,—դա ուրիշ խնդիր է: Բայց անհերքելի մի փաստ է, որ „Journal d'Orient“ լրագրի խմբագիրը առաջին եւրոպացին եղաւ, որ քաջութիւն ունեցաւ անել այն, ինչ որ արաւ:

Կը գայ մի ժամանակ, երբ պ. Սալլի անունը հայոց ազգի ապագայ սերունդներից կը յիշվի նոյն յարգանքով, նոյն երախտագիտական զգացմունքով, որով յիշվում են մեզանում Դիւլօրիէի, Լանգլուայի, Պետերմանի, Միւլլէրի անունները, որոնք բարձրացրին հայոց անունը Եւրոպայի առջև: Սրանք յարգել են տուել եւրոպացուն հայոց անցեալը, իսկ „Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի խմբագիրը յարգել կը տայ հայոց ներկան:

Մենք չենք հերքում որ այսօր կամ վաղ կարող է հիմնվել Եւրոպայում վիէննայի ֆրանսիական լրագրից էլ մի լաւ լրագիր, որ յանձն կառնի հայոց դատը պաշտպանելու. Աստուած տայ, որ այդ պատահի: Քանի շատ լինեն հայոց խնդիրը պաշտպանող եւրոպական օրգաններ, այնքան լաւ: Բայց սկզբնական պատիւը դարձեալ կը պատկանի պ. Սալլին:

Ինչ ուզում են ասեն կրքից և նախանձից կուրացած մարդիկ, հայերը երբէք չեն ունեցել Եւրոպայում իրանց օրգան. իսկ այժմ առաջին անգամ ունեն և այդ բանով պարտական են մի անձնուէր և քաջ օտարազգի երիտասարդին:

Իսկ այժմ, ճշմարիտ է յայտնվում են հետզհետէ և ուրիշները: Նախ „Justice“ փարիզի թերթը յայտնեց որ կամենում է դառնալ հայոց օրգան, յետոյ յայտնվեցաւ որ թէև ինքն այլ ևս չէ յանձն առնում այդ պաշտօնը, բայց ֆրանսիական մայրաքաղաքի մի այլ թերթ, „Union Républicaine“ յօժար է յանձն առնել այդ պաշտօնը: Վերջապէս յունվարից հիմնվում է Լօնդօնում կէս ֆրանսիական և կէս անգլիական մի թերթ „Gazette Orientale“ վերնագրով, որ նոյնպէս յանձն է առնում հայոց դատը պաշտպանելու:

Մենք կրկնում ենք. որքան շատ, այնքան լաւ. և պատրաստ ենք մեր կարողութեան չափ երեքին էլ օգնելու, եթէ հայոց հասարակութիւնը արձագանք կը տայ մեր հրաւէրին, բայց դարձեալ ասում ենք թէ սկզբնական պատիւը այդ գործի մէջ պատկանում է վիէննայի թերթին, որ կարճ ժամանակում մատուցել է արդէն շօշափելի և անգնահատելի ծառայութիւնները իր պաշտպանած գործին:

Վերջապէս թող թիւրքաց, մանաւանդ Կ. Պօլսի հայերը արթնանան իրանց խորին քնից: Նրանք իրանց առջև ունեն երեք օրգաններ, որոնց կարող են նիւթապէս օգնել՝ վիէննայի „Journal d'Orient“ թերթը, փարիզի „Union Républicaine“ լրագիրը և Լօնդօնի „Gazette Orientale“ շաբաթաթերթը: Թող ընտրեն հայերը իրանց ուզած թերթը, կամ թող երեքին էլ օգնեն, այդ նրանց գործն է,—եթէ կամենում են օգտվել Եւրոպայի ծառայութենից և եթէ իրանք մեռած չեն:

Մենք մեր կողմից, մեր կարողութեան չափ, կատարեցինք մեր պարտաւորութիւնը և պատրաստ ենք դարձեալ շարունակել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Նոյեմբերի 18

Շարունակում ենք Ք. Պ. Պատկանեանի երկասիրութեան՝ Վանի արձանագրութիւնները և նրանց նշանակութիւնը առաջաւոր Ասիայի պատմութեան համար՝ բովանդակութիւնը քննել *):

Հայաստանի հնագոյն պատմութիւնը, այսինքն այն պատմութիւնը՝ որ VIII—VII դարերից առաջ է ընթացած՝ մեզ բոլորովին անյայտ է. ոչ իրանք հայերը և ոչ սրանց դրացիները չեն պահել ոչ մի ասացուած այդ դարեթների պատմութեան վերաբերմամբ: Վերջին ժամանակներում Ասորեստանեայց և Պարսից արձանագրութիւնների վերծանութեանց ենք միայն պարտական, որ փոքր ինչ ծանօթացել ենք այն եղելութեանց հետ, որք տեղ են ունեցել Հայաստանում X—V դարեմիջոցում Քրիստոսից առաջ: Բայց որ կարողանանք գնահատել սեպագրական վերծանութեան ցոյց տուած ծառայութիւնը պատմութեանը, հարկաւոր է նախ և առաջ քննել թէ ինչ դրութեան մէջն էր Հայաստանի հին պատմութիւնը մինչև նորագոյն ժամանակները և որ աստիճան կարելի է հաւատ ընծայել այն ասացուածներին, որոնց Հայաստանի պատմութեան փոխարէն էին ցոյց տալի...

Միտ բերելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, մենք կարող ենք համարձակ պնդել, որ նա բնակեցրած էր ամենահեռաւոր ժամանակներում: Հին աշխարհի բարեկրթեալ ազգերի կենտրօնում գտնվելով, Հայաստանը ներկայացնում էր այն վայրը, որտեղ կատարվում էին մինչև նորագոյն ժամանակը արեւմուտքի ունեցած ամենայն ընդհարութիւնքը արեւելքի հետ: Սակայն Հայաստանը, որպէս մի թագաւորութիւն չէ ունեցել մի նշանաւոր դեր մարդկութեան պատմութեան մէջ, և նրա անունը եղել է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի աշխարհի անուն, որտեղ վճռում էին իրանց վէճերը նրա հզօր դրացիները՝ ասորեստանցիներ, մարաց ազգեր, պարսիկներ, յոյներ, հռոմայեցիներ, պարթևներ, արաբներ, թիւրքիայի ցեղեր, մոնգոլներ, տաճիկներ, օսմանցիներ, ռուսեր... չը նայելով Հայաստանի թէ աշխարհագրական յաջողակ դիրքին, թէ նրա բնութեան հարստութեանը, նա, որքան յայտնի է, չէ եղել կրթված ազգի հայրենիք և նրա բնակիչները չեն եղել երբէք աշխարհակալներ, գոնեա չեն հանդիսացել երկար ժամանակ որպէս մի բոլորովին անկախ ազգ: Այս երեւոյթի պատճառը մեկնել դրացիների կենցաղակրթական զօրութեան գերազանցութիւնով — այդ այնքան հիմնաւոր ենթադրութիւն չի լինի... Բայց ինչու Հայաստանի բնակիչները չը կարողացան իրանցից կազմել մի հզօր քաղաքական մարմին, որի տեղ՝ ընդհակառակն՝ տեսնում ենք նրանց իրանց զօրաւոր դրացիների մշտական կախման ներքոյ և օտար ազգերից ստորագրեալ: Թէև այս խնդրի լուծումն չէ վերաբերում մեր յօդուածին, բայց այնու ամենայնիւ կաւելցնենք թէ, ասում է պ. Պատկանեանը,—ոչ նրա բնակիչների արիութեան և ոչ քաջութեան կամ հայրենասիրութեան պակասութիւններն էին արգելք լինում ահաւոր երեւալու իրանց դրացիների արտաքուստ և ծաղկեալ ի ներքուստ, այլ քաղաքական հասունութեան և այն սկզբունքների բացակայութիւնը, որոնք առաջ են բերում հաստատուն թագաւորութիւններ: Ահա քսան և չորս դար է անցել այն ժամանակից, երբ հայերը իրանց անունով հանդէս են գալի պատմութիւնում, ամբողջ ազգից մնացել է մինչև անգամ հայրենիքում հին բնակիչների ցիր ու ցան եղած փշրանքը, բայց հայերը մնացել են այն, ինչ որ էին երբեմն՝ վատ տէրեր իրանց հարազատ հողին ու մտերիմ ծառաներ օտար ազգերին...

Կսենոփոնտի և Մովսէս Խորենացու պահած աւանդութիւններից մենք տեսնում ենք, որ առաջին աքամենիդեանների ժամանակներում Հայաստանի մէջ կային թագաւորներ: Այս աւանդութիւններում մենք գտնում ենք Տիգրանի և նրա հօր յիշատակները, բայց թէ իշխանութիւնը անցաւ սրանց յաջորդներին, կամ աքամենիդները գրկեցին Հայաստանը Հայկազեան, հին թագաւորների տոհմից—մենք չը գիտենք: Բիսուտունեան արձանագրից յայտնի է միայն, որ Դարեհ քանիցս անգամ իր զօրքերը հանում է պատերազմի դաշտը և միայն դաժան ճակատամարտերից յետոյ է կարողանում խորտակել հայերի կամակորութիւնը, բայց նոյն իսկ արձանագրում մենք մի որ և է հայոց թագաւորի անուն չենք գտնում, թէև Դարեհ, խօսելով իր պատերազմների վրա ուրիշ ազգերի հետ, ամեն անգամ անուանում է նրանց թագաւորների անունները: Շատ հաւանական է, որ այն ժամանակ Հայկազեանց արքայական սերունդները կոտորված էին և չը կար մի այնպիսի առանձին նշանաւոր հայոց առաջնորդ *)... Մէկ անգամ միայն Հայաստանը միջոց է ունենում ժողովվելու մի հզօր իշխանութեան տակ. այդ՝ Պարթևաց ժամանակն էր, երբ Արշակունիք, համարեա թէ առանց պատերազմի ձեռք բերելով Հայաստանը, տուեցին նրան հարստութիւն, որը տիրեց մինչև 500 տարի: Մինչև այս ժամանակը հայկական զանազան ցեղերը ապրում էին առանձնացած և ինքնագլուխ իշխանութիւններով: Ակներև է, որ նոքա երկար ժամանակ հասկացողութիւն չեն ունեցել իրանց համարեն ազգակից լինելը և անուանվում էին ոչ թէ մի համազգային անունով, այլ մասնաւոր ցեղերի կամ տեղերի անուններով: Ազգային միութեան ճանաչելը բաւական յապաղում է և գալիս է միայն այն ժամանակ, երբ որ զօրանում է կենտրօնական իշխանութիւնը, որ շաղկապում է ցեղերը, երբ ծագում է ընդհանուր գրականական կամ դիւանական լեզուն, երբ տարածվում է ընդհանուր կրօնը և երբ քաղաքական շահերը դառնում են հասարակաց շահ...

Խօսելով Հայաստանի հին պատմութեան վրա, հարկ է մեզ ծանօթանալ Մովսէս Խորենացու հետ, որը առաջինն է եղել, որ գրել է իր ազգի պատմութիւնը դիւցազնական ժամանակներից սկսած մինչև իր ժամանակները, այսինքն մինչև V դարը Քրիստոսից յետոյ:

Մենք բաց կը թողնենք այստեղ Խորենացու կենսագրութիւնը, որ անում է պ. Պատկանեանը, հիմնելով նոյն իսկ Խորենացու կողմնակի ցոյց տուած լուրերի վրա այս մասին, բաց ենք թողնում նոյնպէս «հայոց պատմութեան» ուրիշ աղբիւրների վրա արած խորհրդածութիւնները և կանգ ենք առնում Խորենացու գլխաւոր աղբիւրի, Մար-Աբասի և սրա գրքի վրա:

Խորենացին պատմում է՝ «Եւ ընկալեալ Արշակայ մեծի զգլուխ ի ձեռաց Մար Աբաս Կատինայ, մեծաւ լրջմտութեամբ հրամայէ առաջի

---

*) «Մշակ» № 189.

*) Նոյն միտքը յայտնում է և Թովմաս Արծրունին.

գործը երեք լրագիրների համար էլ բաժանորդագրութիւնն ընդունելով։ կամ եթէ հայոց հասարակութիւնը, ինչպէս արդէն տեսցինք, մեր լրագրին, „Մշակին“, կը տայ երկու հազար բաժանորդ, այն ժամանակ մենք ինքներս մեր սեփական միջոցներով, կարողութեան չափ կօգնենք երեք լրագիրներին էլ, առանց նորից դիմելու հասարակութեանը։

Իսկ նրանք, որոնք մեր արածը, որքան էլ նա թոյլ լինէր, ոչինչ և կատարելապէս անօգուտ են համարում, իսկ իրանք այդ ուղղութեամբ ոչինչ չեն արել,— թող փորձեն մեզանից շատ անել։

Որովհետև „Justice“ լրագիրը արդէն հրաժարվել է հայոց վրա յօդուածներ տպելուց, մենք կը սպասենք ինչ տեսակ պահանջներ կանէ „Union Républicaine“ թերթը։ Իսկ Լօնդօնի „Արևելեան լրագրին“ մենք կաշխատենք անմիջապէս մի, թէև դուցէ աննշան, գումար հասցնելու։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Նոյեմբերի 11-ին

«Մշակի» 197 համարում հրատարակված էր մի յօդուած «Ուսանողութիւն» վերնագրով և «Ա. Կ-եանց» ստորագրութեամբ, որի մէջ յօդուածագիրը աշխատում է, չը գիտեմ, թէ ինչ պատճառներից դրդված, շօշափել ամբողջ ուսանողութեան պատիւը.

Մի ամբողջ ուսանողութեան կեանքի, նրա ձգտումների և գաղափարների հետ ծանօթանալու համար, տարիներ են հարկաւոր։ Մինչև որ մարդը ինքն չապրէ այդ կեանքով, չը քաշէ նրա քաշած նեղութիւնները, նրա բոլոր զրկանքը, նրա կեանքի բոլոր անյարմարութիւնները և այլն, չէ կարող ոչ մի հասկացողութիւն ունենալ ուսանողութեան վրա։ Դառնամ այժմ յօդուածագրի յօդուածի մի քանի նշանաւոր կէտերը հերքելուն, որով յոյս ունեմ միամտացնել ընթերցողին, որին Կ-եանցը մոլորեցրել է իր յօդուածով։

«Մենք ամենքս ուսանողութեան վրա խօսելիս, ասում է Կ-եանցը, սովորութիւն ենք արել մեզ կրկնել միշտ մի և նոյն ֆօրմուլան, թէ ուսանողութիւնն է մեր բոլոր յոյսը» և այլն։ Իսկ ես կասեմ, որ այն հասարակութիւնը, այն ժողովուրդը, որը բոլորովին չէ հետաքրքրվում իմանալ ուսանողի դրութիւնը, որը ոչինչ նշանակութիւն չէ տալիս այն տխուր երևոյթին, որ իր զաւակներից 3—4 ամենայն տարի զոհ են գնում հիւսիսային կլիմային, ենթարկելով իրանց կեանքը զանազան անյարմարութիւնների թէ կերակուրի կողմից, թէ տաք շորի, թէ սենեակի և վերջապէս չէ շտապում մի որ և իցէ միջոց գտնել այդ բոլոր անյարմարութիւնները վերացնելու, ասում եմ, այդ ժողովուրդը միթէ կարող է ասել, որ ուսանողութիւնն է մեր յոյսը և այլն։ Ես չեմ հասկանում, թէ ինչպէս է կարող մարդս մի որ և իցէ յոյս դնել մէկի վրա, քանի որ նա նրան չէ ճանաչում։ Հայ ժողովրդի ուսանողին չը ճանաչելը, չքաւոր ուսանողաց չօգնելը, մի բարեգործական այդ նպատակով ընկերութեան չը հիմնելը, նրա խորթութիւնը, նրա առանձնութիւնը, ուսանողութեան հետ ոչ մի յարաբերութիւն չունենալը (առաւել այս տեղի հայ հասարակութիւնը), այդ բոլորը անհերքելի փաստեր են։ Ո՞ւր են մեր Լեպեօշկինները, ո՞ւր են մեր ուսանողաց օգնող բարեգործական ընկերութիւնները։ Այսքան լալիս են, այսքան խընդրում են, բայց ո՞վ է լսողը։ Արդեօք գտնվեցաւ հէնց Մօսկվայի կամ Ս. Պետերբուրգի կրթեալ և լուսաւոր հայ հասարակութեան մէջ, որի թւում կան պրօֆեսօրներ, գիտնականներ, միլիօնատէր հարուստներ, մի ինիցիատոր, մի բարի մարդ, որ առաջարկէր մի բարեգործական ընկերութիւն հիմնել հէնց Մօսկվայի մէջ, չը նայած, որ նրանց աչքի առաջն է ամեն բանը, այսինքն ուսանողի կրած զրկանքը, նրա քաշած նեղութիւնները և վերջապէս ամեն օր երևում է նրա գունատ, նիհար դէմքը, որը այսօր թէ վաղը մահ է խոստանում։ Չէ, ընթերցող, չեն եղել այդպիսի բարի մարդիկ։ Ուրեմն, այդպիսի հասարակութիւնն էլ իրաւունք չունի ոչինչ պահանջել ուսանողից և յոյս դնել ուսանողի վրա։

Բայց և այնպէս, չը նայած այն նեղութիւններին, որին ենթարկված է, համարեա, ամեն մի ուսանող, նա հասկանում է իր բարոյական պարտաւորութիւնը։ Ուսանողն է, որ վեր է առել իր վրա չքաւոր ընկերներին օգնելը և ոչ թէ ոչինչ չը տուող, բայց շատ պահանջող հասարակութիւնը։ Նա նոյնպէս կարողացածին չափ աշխատում է, պատրաստվում է օգտաւէտ լինել թէ իր սիրելի ազգին և թէ ամբողջ մարդկութեան ի հարկէ, խօսքս ընդհանրութեան վրա է և ոչ բացառութեան— семья не безъ урода.— Բայց թէ կան կամ եղել են անտարբեր և, ինչպէս Կ-եանցն է ասում, «ցիլինդրաւոր անպէտք պարոններ, որոնցով լի է Թիֆլիսը», այդ դեռ ես չէ ապացուցանում, որ այժմեան ուսանողութիւնն էլ այդպիսի հասարակական գործիչներ է խոստանում. պատճառ որ ինչ որ եղել է 5 տարի սրանից առաջ, այժմ այլ ես այն չէ։ Ահա ձեզ ապացոյց. թէ ինչ էինք մենք հայերս 10 տարի առաջ և ինչ ենք այժմ։ Կամ թէ, պ. Կ-եանց, միթէ կարելի է պահանջել ամեն մի ուսանողից, որ նա աւարտելուց հասարակական գործիչ դառնայ կամ թէ, ինչպէս դուք էք ասում «մեր վէրքերը դարմանող հմուտ բժիշկը»։ Բայց եթէ աւարտողը այդ ընդունակութիւնը չունէ։ Գուցէ Կ-եանցը այսպէս է հասկանում, որ ամեն մի մարդ հասարակական գործիչ լինելու համար, պէտք է յօդուածներ հրատարակէ լրագիրներում, նրա հասկացողութեամբ այդ է նշանակում գործել և ինչպէս տեսնում ենք, ինքն էլ է սկսել գործել։ Այժմ մի փոքր ուշադրութիւն, ընթերցող, յօդուածի այն կէտի վրա, որտեղ Կ-եանցը խօսում է ուսումը աւարտած գիմնազիստի վրա։ Յօդուածի այդ երեսի տեղը կարդալուց, կամայ ակամայ կարծում ես, որ այդ մարդը շատ ցաւում և ափսոսում է, որ ազատվել է գիմնազիական «մունդիրից» և ահ ու վախով է մտաբերում նրա պսպղուն կոճակները, կարծես նա ափսոսում է, որ ուսանողը ազատ է, նա ափսոսում է, որ ուսանողին արդեօք չը կայ իր ուզածն անել, վերջապէս ազատ շունչ քաշել, այլ լինի միշտ «կօնտրօլի», միշտ հսկողութեան տակ, չունենայ ո՛չ կամք, ո՛չ ցանկութիւն, այլ նստէ, վեր կենայ, ուտէ, խմէ, խօսէ զանգակով և ամեն անգամ դրա համար կանօններ փնտռէ։ Ահա, թէ ինչ է ասում Կ-եանցը. «Թէև ուսանողական կանօնների մէջ ասված է որ ուսանողի առաջին պարտականութիւնն է ճշդութեամբ յաճախել լէկցիաները (դասախօսութիւնները), բայց այս կէտը շատ անգամ մեռած տառ է մնում և ուսանողը բոլորովին կօնտրօլ չունենալով իր վրա, գործում է ամեն բան ինչպէս կամենում է»։ Ինչպէս երևում է, Կ-եանցը շատ է սիրում հրամաններ կատարել։ Գուցէ Կ-եանցը շատ էլ ափսոսում լինի, որ կոմս Տօլստոյը այժմ չը կայ։ Իսկ ինչ վերաբերում է ուսանողաց «ամբողջ գիշեր թատրօնում, տրակտիրում և այլ այսպիսի զանազան հասարակական տեղերում անցնելուն» ես կասեմ, որ դրա համար «դրամ» է հարկաւոր։ Այդ դուք գիտէք, թէ ոչ։ Թէ կարծում էք, որ ուսանողները անփող են գնում։ Միթէ չը գիտէք, որ ուսանողը հազիւ հազ կարողանում է կառավարվել իր ստացած 25—35 ր. ամսականով, ուր մնաց, որ նա թատրօններ գնայ։ Իսկ թէ ամիսը մի կամ երկու անգամ, իրան զրկելով կերակուրից, կամենում է մի փոքր մտաւորական զուարճութիւն ստանալ, այդ, կարծեմ, մինչև անգամ ամենաքթամիտ և անկիրթ մարդն էլ կանէ, որ չէ հասկանում մտաւոր զուարճութեան նշանակութիւնը։ Իսկ թէ ուսանողը անցնում է ամբողջ գիշերներ տրակտիրներում, ինչպէս ասում է Կ-եանցը, այդ մի այնպիսի զրպարտութիւն է, որ չը գիտեմ, թէ ինչով բացատրեմ։ Ասացէք խնդրեմ, քանիսին էք ճանաչում, որ տրակտիրներում անցնում լինեն։ Ես, գոնեայ, երկրորդ տարին է այստեղ եմ, ոչ մէկին չեմ ճանաչում։

«Պարկեշտուհիների» մասին, ես կարճ կասեմ, որ Կ-եանցը չափազանցութեան է հասցրել։ Սրա մասին ես կարելի է խօսել, բայց անյարմար է։ Միայն թող ներվի ինձ հարցնել Կ-եանցին. այդ նա որտեղից գիտէ որ այդ նոյն իսկ «պարկեշտուհիները» մի տղամարդ որսալու մէջ, ինչպէս ինքն է ասում, «շատ հմուտ ու փորձված են»։

Վերջացնելով, կասեմ, որ իմ գլխաւոր նպատակն էր ոչ թէ պատասխանել Կ-եանցին, այլ փարատել ժողովրդի կասկածանքը, որ կարող էր ծնվել Կ-եանցի գրածները կարդալով։

Կ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՆՁԱԿԻՑ, պ. Իվան Կարագաղաեանցից ստացանք 60 րուբլ «Ժուրնալ դ՚Օրլեանի» բաժանորդագրութիւն, հետևեալ նամակով. «Ձեր վրա ունեմ ուղարկած «Ժուրնալ դ՚Օրլեանի» համար 50 րուբլ, որի մասին տպված է արդէն «Մշակի» մէջ։ Այժմ ուղարկում եմ դարձեալ 60 րուբլ, որ միասին կանի 110 րուբլ։ Բաժանորդագրութիւնը շարունակվում է և նուիրատուների ցուցակը կուղարկեմ»։

—

ԱՐՄԱՒԻՐԻՑ ստացանք 3 րուբլ բաժանորդագին «Ժուրնալ դ՚Օրլեանի» համար, պ. Շահան Շահանեանցից։

—

Ստացանք «Ժուրնալ դ՚Օրլեանի» համար 4 ր. 15 կ. Նոր-Բայազէտի Ներքին-Ախտա գիւղից, պ. Գրիգոր Տէր-Անդրէասեանցից և նոյն լրագրի բաժանորդագին 8 րուբլ Ս. Պետերբուրգից, պ. Յարութիւն Սարգսեանից։ Անցեալ 817 րուբլ գումարի հետ, կունենանք «Ժուրնալ դ՚Օրլեանի» համար բաժանորդական գումար 892 րուբլ 15 կօպէկ։

—

Ռէալական դպրոցի հայ աշակերտները յայտնում են թէ ինչ նուէրներ ստացան իրանց գրադարանի համար այլ և այլ անձինքներից։ Կրկնում ենք որ այդ տեսակ լուրեր մեզ անհնարին է տպագրել «Մշակի» մէջ, որովհետև այն ժամանակ էլ տեղ չի մնայ որ և է յօդուածների համար։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Թիւրքիայի ժամանակակից դրութեան մասին լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ դատողութիւնները։ Թիւրքաց սուլթանների անձնական կառավարութիւնը, սուլթանի պալատականների տիրապետութիւնը, քաղաքական կեանքի բացակայութիւնը, կամայական վարչութեան անպատասխանատուութիւնը, սկզբունք դարձրած ինքնիշխան կամայականութիւնը, այդ բոլորը հասցրեց Թիւրքիային այն դրութեանը, որ իր մէջ պարունակում է քայքայման և մահուան նշաններ։ Ոչինչով չը սահմանափակված Թիւրքաց կառավարութիւնը կորցրեց իր ներքին և արտաքին նշանակութիւնը։ Չը նայելով իր արտաքին առերեւոյթին Թիւրքիային վիճակված է թշուառ և անզօր գոյութիւն։

Թիւրքական կառավարութեան հին, անուղղելի մեղքերը, անհաշտութիւնը և վատութիւնը ներգործեցին պետական տընտեսութեան վրա։ Երկրի բնական հարստու-

---

տանել նմա զգիւանն արքունի որ ի Նինուէ... Եւ խուզեալ սորա զամենայն մատեանսն, գտանէ մատեան մի հելլէն գրով, յորոյ վերայ էր, ասէ, (Մար Աբասը) վերնագիրն այսպիսի՝ Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս.... Ցայսմ մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի, բերէ առ արքայ Վաղարշակ ի Մծբին յոյն և ասորի գրով... Առեալ (այս պատմութիւնը) Վաղարշակ առաջին իւրոյ գանձուն համարելով՝ դնէր յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ և մասն ինչ ի յարձանի հրամայէ դրօշմել...

Դեռ ես Կատրմէր ուշադրութիւն է դարձնում այս պարագաների անյարմարութեանց վրա *)... Եւ եթէ նրա այս մասին արած առարկութիւնները հիմնաւոր չեն ամենը, այնու ամենայնիւ նրանցից մի քանիսը ծանրակշիռ են։ Հայոց պատմութեան մտադիր ընթերցանութիւնից դիւրաւ երևում է, որ Խորենացին սխալվել է իր աղբիւրի վերաբերմամբ։ Խորենացու ճշդութիւնը և արդարամտութիւնը ընդունում են մինչև անգամ նոքա, որոնք միանգամայն չեն մասնակցում նրա Մար-Աբասի վրա ունեցած վստահութեանը, այս պատճառաւ պ. Պատկանեանը իր հեռաւոր մեկնութեանց մէջ պատսպարում է Խորենացուն և դիմում է անմիջապէս Մար-Աբասին։ — Գրականական խաբէութիւնը, գրում է պատկառելի հեղինակը,—ըստ մեծի մասին պահում է իր մէջ այնպիսի յատկանիշներ, որոնք ագան կամ անագան բացայայտում են նրա ինչ լինելը և յաճախ ինքը զինւորում է հետազօտողին պարզ ապացոյցներով իր դէմ։ Դատապարտելով Մար-Աբասին իր կեղծութեան պատճառով, մենք կաշխատենք հէնց իր խօսքերում գտնել հաստատութիւն մեր կարծիքին։ Ուշադրութիւն դարձնենք, վերը առաջ բերած հատուածի, հետևեալ կէտերի վրա։

1) Թէ Մար-Աբաս Կատինան, ասորի գիտնականը, 150 տարի Քրիստոսից առաջ է եղել աշխարհում, որովհետև սա ձեացնում է իրան ժամանակակից Արշակ մեծին, ուրեմն՝ Միհրդատ I-ին, որը եղել է այն ժամանակներում.

2) Թէ նա աշխատասիրել է այն հաւաստի գրուածքներով, որոնք գտնվում էին Նինուէի դիւանում.

3) Թէ նա գտել է այս դիւանում մի գիրք հետևեալ վերնագրով. Այս մատեան հրամանաւ Աղեքսանդրի ի քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյնն, որ ունի զբուն հնոց և զնախնեացն բանս—

4) Թէ Մար-Աբասը քաղուածքներ է արել նրանից յունաց և ասորի լեզուներով և բերել է Վաղարշակին, որը հրամայել է այս հատուածներից մի մասը քանդակել արձանի վրա, և

5) Թէ առաւել քան երկու հազար տարի մեզանից առաջ բուն Հայաստանում չը կային պատմական շարագրութիւններ նրա հնագոյն անցքերի վրա, և սրանց ստանալու համար հարկաւոր է եղել ուղարկել ասորի գիտնականին Նինուէի դիւանը։

Քննողութեան առնենք այն կէտերը և տեսնենք սրանց ամեն մէկը արդեօք չէ բովանդակում իր մէջ այնպիսի հանգամանքներ, որոնք կասկածանք են պատճառում, և ամենի մէջ ի միասին— այնքան անդէպայ և ժամանակագրական խոտորումների գումարումն, որ մենք իրաւունք ունենանք տալ Մար-Աբասին—կամ այն հեղինակին, որը նուիրել է հեղինակութիւնը վերջինին—խարդաւանիչ անունը...

Նինուէի դիւանը արդարև եղել է, բայց ոչ II այլ VII դարում Քր. ա.... Աշուր-բան-ապալի (Սարդանապալ) (668—647—628 Ք. ա.) մահից յետ սկսում են իրանց կործանիչ արշաւանքները սկիւթացիք։ Սրանցից յետոյ շուտով Կիակսարը տալիս է վերջին հարուածը Նինուէին, որը իր աւերակների տակից էլ բնաւ չէ վերանորոգվում... փոքր առ փոքր այս աւերակներն էլ ծածկվում են փոշիով և արդէն IV—V դարերում Ք. ա. Նինուէի անունը աներևութանում է. որպէս գոյութիւն ունեցող մի քաղաքի անուն, չէ յիշվում նա ոչ մի պատմագրից։ Ենթադրենք անգամ երկու անկարելութիւն. նախ՝ թէ Մար-Աբասը մի որ և է ճանապարհով եղել է այն դիւանում, և երկրորդ՝ ասենք թէ նա ծանօթ էր բևեռագրերի ընթերցանութեան հետ։ Եթէ այդպէս է, այն ժամանակ մենք իրաւունք ունենք սպասելու նրանից այնպիսի տեղեկութիւններ, որք պիտի համաձայն լինէին գոնէ մօտաւորապէս այն նորագոյն տեղեկութիւնների հետ, որք ստացվում են այժմ բուն ասորեստանեացի դիւանական հաւաստիքի վերծանութիւններից։ Բայց այս ակնկալեալ արգասիքի տեղ՝ հէնց նոյն իսկ Ասորեստանի պատմութեան վերաբերմամբ՝ մենք ի՞նչ ենք գտնում... Զարմանալի և շատ զիպուածներում բառ առ բառ համաձայնութիւն Կտեսիասի պատմածների հետ... Կրկին կասկած է ձգում մեր սիրտը Նինուէի դիւանում պարապող պատմարանը... Այն, ինչ որ պատմում է մեզ Մար-Աբասը, ի հարկէ բաց առնելով հայոց պատմութիւնը, 80 տարի Աղեքսանդրից և 230 տարի նոյն իսկ Մար-Աբասից առաջ յայտնի է, ամբողջ ընթերցող յունաց աշխարհին։

Հաւանական է, Մար-Աբասը կամեցել է տալ իր կեղծ աղբիւրին մեծարոյ հեղինակական ծագում, ինչպէս արել է մի ժամանակ Բերօզ, և ահա նա տառ առ տառ կրկնում է այն, ինչ որ ասած էր Բերօզի գրքի վերաբերութեամբ՝ այս մատեան (այսինքն Մար-Աբասի աղբիւրը) հրամանաւ Աղեքսանդրի ի քաղդէացւոց բարբառոյ փոխեալ ի յոյնն...

Այս է պատճառը որ այս գիրքը լոյս է տեսնում առանց անունի՝ վերոյիշեալ մի օտարոտի վերնագրով... կարելի է եզրակացնել թէ այն գիրքը, որի վրա ուշադրութիւն է դարձնում Աղեքսանդրը և որը հրամայում է թարգմանել յունարէն, մնաց անյայտ ամբողջ 800 տարի նոյն իսկ յունաց և միայն Խորենացին դարձրեց իր ուշադրութիւնը նրա վրա... Ակներև է, որ այս գիրքը ի հնումն չէ եղել գրված, այլ Մ. Խորենացուն մօտաւոր ժամանակներում և նրա հեղինակը վերագրել է մի ինչ Մար-Աբասին մեծն Արշակի ժամանակակցին։ Այն ժամանակներում անգամ (Խորենացուց փոքր ինչ առաջ) այս մատեանը իր չնչին բովանդակութեամբ և անքննողական մեկնութեամբը ոչ մի բարեմիտ մարդի ուշադրութիւնը չէ դարձնում իր վրա, իսկ Խորենացուն կաշառել է միայն նրանով, որ Հայաստանի պատմութեանն է վերաբերել, որի վրա երբեք ոչինչ չէ եղել գրված... Մովսէս Խորենացու համար հանգամանքները այնպէս էին կարգվել, որ սա ստիպված է եղել որտեղից էլ որ լինէր ստեղծել Հայաստանի պատմութիւնը՝ Յարգանքով վերաբերվելով ամենայն գրականական աշխատանքին, ի բնուստ բարեխիղճ Մով-

---

*) S. Quatremère—Observation sur la ville de Ninive, troisiéme article 'ի Journal de Savants, 1850, P. 365.

Աւելորդ չի լինի եթէ մատնացոյց անենք նմանապէս Ֆրերէին Fréret.—De l'année armenienne, t. XII, p. 207—208).